ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐ

ԱՐՁԱԿ

(Ժողովրդավար և ռեալիստական ձեռագրերի հրատարակչություն)

Ծաղկած թզի պտղով պատրաստված ...

(Կ ի չ ե ր)

—

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ

Փարիզ, 6 մարտ 1901 թ.

Ցուցակ ...

Ներկայացուցիչներ ...

Տարեկան բաժանորդագին ...

Հասցե ...

Ֆրանսիա ...

Ամերիկա ...

Ռուսաստան ...

Ընդունվում են ...

Ֆրանսերեն ...

Գրական ...

Գրքեր ...

Ֆրանսերեն ...

Ռուսերեն ...

Ֆրանսերեն ...

Ռուսերեն ...

Ֆրանսերեն ...

Ռուսերեն

...Իրեն դէմ տեսաւ ու ե...
ասեցին «Ինչո՞ւ ես եկել»։ Ես ալ ըսի թէ ինձ ալ ըսին թէ եկուր։ Ես ալ եկայ։ Ինչո՞ւ եկայ չգիտեմ։ Ինչո՞ւ եկայ չգիտեմ։ Ինչո՞ւ եկայ չգիտեմ

ՊԱՐՈՆ ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ

(«Դուր-Գարն» ի-ից)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Ա. ՊԱՐԱԳԱՅ

Ա. պ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾՔ

ՀԱՅ ԴԱՏԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ՏՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ

Ա. պ. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

Ա. պ. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

Ա. պ. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

Ա. պ. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

Ա. պ. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

Ա. պ. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

աւելի քան 300 հոգի. նրանց աջ կողմն էր հասարակապետական պահակազօրի յայտնի երաժշտական խումբը, աւելի քան 100 հոգուց բաղկացած, և երևակայեցէք այն հսկայական «Մարսէլիէզը», որ լսում էր այդքան երաժիշտների դործիքներից...

Հազարաւոր ժողովրդի դիմաց, դահլիճի նախադրան կողմը, օդի բարձրութեան մէջ, երևում էր Վերդիի կիսաքանդակը, զարդարուած դափնեայ պսակներով և կենդանի ծաղիկներով, որոնք միացած քնարներով իջնում էին ու խոնարհում առ ոտս հանճարին:

Ժամն ութիլ 3½-ին սկսւում է հանդիսաւոր ծրագրի կատարումն, ծրագիրը՝ որ ամբողջովին նուիրուած է Վերդիին, կամ աւելի ճիշտն ասել, որ Վերդին նուիրում է մարդկութեան: Միացեալ օրկեստրներն սկսում են նուագել Վերդիի երկերից «Սիցիլեան գիշերների» նախերգանքը, մի երաժշտութիւն՝ ուր քնութիւնն ինքն է խօսում և լալիս ու ծիծաղում: Ապա Մեծ Օպերայի հռչակաւոր երգիչ պ. Դէլմա երգում է Credo Օթելլոյի արիան՝ օրկեստրի ձայնակցութեամբ: Ընհնարին է նկարագրել հասարակութեան ոգեորութիւնն այն րոպէին, երբ օպերայի չորս երգչուհիք երգում են քառաձայն Դանտէի «Ողջոյն աւ Կոյսն», որ երաժշտութեան է վերաժել Վերդին: Դա Վերդիի վերջին օրերի երկերիցն է և մեր երկրում դեռ անծանօթ ու մի երկնային երաժշտութիւն է, որ լըցնում է լսողի սիրտն անսահման երանութեամբ և խաղաղ վշտով:

Ո՞վ է ասում, թէ մեռել է Վերդին. ահա նա կենդանի մեր մէջն է և երգում է բոլոր լեզուներով, բոլոր զգացումներով և սիրելի է ամենքին ու հասկանալի է ամենքին:

Ֆրանսիացիք ժողովուել են այդ օրը Սորբոն, որպէս զի այդ ճշմարտութիւնն ապացուցանեն, և թէ մխիթար Լէյդը, թէ ակադեմիկոս Լաբուէէն, թէ պոէտ Կլովին հիւրն իրենց ճարտար ճառերի մէջ միայն այն են պնդում, թէ Վերդին տիրել է մեր ժողերին իւր հանճարով և դրանով մեզ սովորեցրել ու հարկադրել է եղբայրներ լինել իւր հայրենակիցներին և սիրել նրանց այնպէս, ինչպէս Վերդիին իրեն: Այդ տեսարանին ներկայ լինելով դուք սքանչանում էք, զգալով թէ ինչպէս մի մեռած հանճարի կենդանի հոգին աւելի մեծ դեր է խաղում ազգերի եղբայրութեան գործում, քան կենդանի մարդկանց մեռած հոգիները:

Ես դուրս եկայ այդ օրը Սորբոնի դահլիճից այն համոզմունքով, թէ աշխարհի խիղճը և օրէնքները հանճարների ձեռքումն են և թէ քնութիւնը միշտ պիտի ծնանի նրանց, իբրև ծաղը ու պատիժ այն ամենքի, որոնք կարծում են, թէ կարող են մարդկանցից վերջ ի վերջոյ գագափանները պատրաստել:

*
* *

Նկարագրութիւնս թերի չմնալու համար աւելացնեմ, որ Վերսիեան հանդիսի յանձնաժողովը հասարակութեան ձրիարար բաժանեց մի շատ հետաքրքրական պատկերազարդ հրատարակութիւն, Վերդիի կենսագրութեամբ, կենդանագրերով և ուրիշ գեղարուեստական յատկութիւններով: Հանդիսականներն այդ յիշատակ ընծան կրում էին իրենց ձեռքներին իբրև մի սրբութիւն:

Ս. Հախումեան

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹԻՒՐՔԻԱ

«Ռուս գրծ.»-ը մայրաքաղաքի թերթերին հեռագրում է Կ. Պոլսից, փետր. 25-ից, որ ռուսաց դեսպան պ. Զինովիևին առած ունկնդրութեան ժամանակ սուլթանը շնորհակալութիւն յայտնել մակեդոնական կոմիտեների գործունէութեան վերաբերմամբ Ռուսիայի ցոյց տուած վարմունքի համար և գոհունակութիւն յայտնել Կրետէում status quo ն պահպանելու համար չորս պետութիւնների ընդունած որոշման առթիւ:

—Նոյն գործակալութիւնը հեռագրում է Կ. Պոլսից փետրուարի 26-ից. «Սոլոմնում ձերբակալուած բուլղարների դատը կըսկսուի այս շաբաթ: Սոլոնի վալին դիմել է Ելդըզ-Քէօշկ կարգադրութիւն խնդրելով այն մասին, թէ դատը հրապարակական պիտի լինի, թէ ոչ, և յանցաւորները պիտի դատուին սովորականի դատարանով, թէ արտակարգ»:

—Կ. Պոլսից հաղորդում են, որ Թուրքոստիկանութիւնը փետրուարի 22 ին ուզում էր խուզարկութիւն կատարել Մոնաստիրում բուլղարական ուսումնարանի տեսչի մօտ: Տեսուչն այդ մասին յայտնել էր ռուսաց հիւպատոսին: Հիւպատոսն շտապեց այնտեղ իւր բոլոր կազմներով և վռնտեց խուզարկութիւնը կատարելու համար եկած ոստիկաններին:

—Բուխարայի Էմիրը Կ. Պոլսի ռուսաց դեսպանի միջոցով 160,000 ր է փոխադրել Դամասկոս-Մէկքայի երկաթուղու կառուցման համար: Դեսպանն այդ մասին յայտնել է Բ. Դրանը:

—

ՀԱՐԻՒԱՅԻՆ ԱՓՐԻԿԱ

«Daily Chronicle»-ը հաղորդում է, որ Կիտչների և Բոթայի միջև գլխաւոր միջնորդը Բոթայի կինն էր, որն ապրում էր Պրետորիայում և որին մեծ մրտահոգութիւն է պատճառում բոէրների վիճակը: Փետրուարի 14-ին ոննեցած խորհրդակցութեան ժամանակ Կիտչները Բոթայի հարցմունքին պատասխանեց, որ եթէ բոէրները զէնքը վայր դընեն, նրանց բոլորին էլ ներում կըշնորհուի: Ներում չի շնորհուիլ միայն Կապի այն աֆրիկանդերներին, որոնք անգլիական հպատակներ են: Բացի դրանից, Թեհան ու Ջոայնը նոյնպէս ոչ մի պայմանով ներման չեն ենթարկուիլ: Կիտչներն աւելացրեց, որ հաշտութիւն կայանալուց յետոյ անգլիական կառավարութիւնը կընպաստի այրուած ագարակները նորոգելու և տէրերին այդ ագարակներում վերաբնակեցնելու, նմանապէս կօգնէ նրանց աշխատանքների համար ձիեր գնելու, բացի միայն նրանցից, որոնք դաւաճանել են Բոթան գոհ մնաց այդ բանից և հեռացաւ իւր սպաների հետ խորհրդակցելու համար: Սպաների ահագին մեծամասնութիւնն ընդունեց պայմանները. բայց Թեհան ու Ջոայնը հրաժարուեցին որևէ պայմանի համաձայնութիւն տալուց: Թեհան ասաց, որ իւր համար պատերազմը դարձել է վէճ ժնդրութեան մի գործ: Բոթային աջողուել է արդէն իւր ամենայամառ սպաներին համաձայնեցնել առ վերոյիշեալ պայմանները ընդունելու: Սպասւում է, որ բոէրները վերջնակապ նպաչս անձնատուր լինին չուտով, երբ Բոթայի զօրքն իւր զէնքը պաշտօնապէս կըյանձնի գեներալ Փրենչին: Կիտչները Բոթային խիստ սիրալիր ընդունելութիւն ցոյց տուեց խորհրդակցութիւնների ժամանակ, որոնք տեղի ունեցան Միդելբուրգում փետրուարի 14-ին և 17 ին:

—

ՉԻՆԱՍՏԱՆ

«Morning Post»-ին Բաոդինֆուից հաղորդում են, որ Մեծ լուսնցքի շարժումը նորից սկսել է սաստկանալ: Գերմանական զօրքերին աջողուեց ոճրագործութեան տեղում բռնել բոքսըրների, որոնք և գլխատուեցին: Այս պատճառով օտարերկրեայ զօրքերի յանկարծակի հեռացումը, յիշեալ լրագրի կարծիքով, կործանարար կըլինի:

—Բաոդինֆու հասած մի մանջուրացի քրիստոնեայ, նոյն թղթակցի ասելով, հաղորդել է, որ չինական արքունիքը պատրաստութիւններ է տեսնում նոր մայրաքաղաք հիմնելու Խունանի գլխաւոր քաղաքում, որը գտնւում է Դեղին գետի հարաւային կողմը: Այս լուրը հաստատւում է իբր թէ Նրանով, որ արքունի գանձարանը 2 ժիլիից փոխադրւում է Թամին, որը գտնւում է գետի ամենածայրագոյն հարաւային չրջանում:

—Պեկինից նոյն լրագրին հաղորդում են, որ չինական իշխանութիւնն աչքատում է թոյլատուութիւն ստանալ Պեկին մացնելու չինական 3,000 զօրք Զանքհայի նահանգապետ Եուանշիքայի հրամանատարութեամբ, բայց օտարերկրեայ զօրքերի գլխաւորները լսել անգամ չեն կամենում այդ մասին, մինչև որ կառավարութիւնը չկատարէ հաշտութեան յայտագրի պայմանները և չապահովէ անդորրութիւնը:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Լուսաւորութեան մինիստրի բագլեպովի կեանքի դէմ սպանութեան փորձ անող Կարպովիչի գործի քննութիւնը, որը նշանակուած էր Պետերբուրգի պատական պալատում մարտի 3-ին, – յետաձգուած է:

—Լսւում է, որ բուլղարական ներքին գործերի մինիստրը հրամայել է խլել մակեդոնական հրացանաձիգների ընկերութեանց զէնքերը և արգելել նրանց զինամարզութեամբ պարապել:

—Կիտչենների հեռագիրը Պրետորիայից հաղորդում է. «Փրենչն ի լրումն իւր նախկին հաղորդագրութեան զեկուցագրում է, որ դարձել 46 բոէր սպանուած և վիրաւորուած է, 146 հոգի դերի են բռնուած կամ անձնատուր են եղել: Նա խլել է դարձեալ 200 հրացան, 2,700 փամփուշտ, 2,400 ձի, 120 ջորի, 370 լծկան կոմէշ, 2,500 գլուխ տաւար և 400 սայլ: Եղանակը դեռ ևս անձրեւային է և խանգարում է զօրամասերի յառաջխաղացումը»:

— Կ. Պոլսից հեռագրում են, որ կայանալիք ալբանական ազգային ժողովն այլ ևս տեղի չպիտի ունենայ տեղական իշխանութիւնների ելդելդ Քէօշկից ստացած կարգադրութիւնների պատճառով:

—Կապշտադից հեռագրում են, որ հեռագրական հաղորդակցութիւնը Նաթալի արևելեան մասի հետ կտրուած է, բոէրները կարատել են հեռագրաթելերը:

—Բլումֆոնտէյնից հեռագրում են, որ Դեհառը մի ճառ լսուել իւր կողմնակից ներին, որի մէջ յայտարարեց, թէ Տրանսվաալում ամենևին ոչ մի բանակցութիւն տեղի չի ունենում անգլիական իշխանութիւնների հետ հաշտութեան մասին:

—Փրենչի հրամանատարութեան տակ գտնուած զօրքերը դադարեցրել են գործողութիւնները, Կիտչենների և Բոթայի միջև տեղի ունեցող բանակցութիւնների պատճառով:

—Անգլիական արքայական զոյգն և Կոնէուլի հերցոգն ու հերցոգուհին մարտի 3 ին մեկնեցին Պորտսմուտ: Այնտեղից գահաժառանգն իւր ամուսնու հետ կը մեկնի երկարատև ճանապարհորդութիւն կատարելու համար.

—Քորէայի ֆինանսների մինիստրը ձերբակալուած է, որովհետև նրա վրայ կասկած կար, թէ մտադիր է եղել սպանել կայսրի սիրած կնոջն ու պալատական ուրիշ տիկնանց: Մինիստրութիւնը հրաժարական տուեց:

—Անգլիական պատգամաւորների ժողովն ընդունեց զօրքերի ընդհանուր թուի և այդ թիւն աւելացնելու համար լինելիք ծախսերի ծրագիրը համաձայն Բրոդրիկի առաջարկութեան: Այդ ծրագիրը յօդուած առ յօդուած կըքննուի յետագայում:

—Միացեալ Նահանգները, թէև անուղղակի կերպով, հարաւ-աֆրիկեան երկու հասարակապետութիւնները միացած են ճանաչել Անգլիայի հետ. այդպէս է գրուած Միացեալ Նահանգների առևտրի տարեկան տեղեկագրի մէջ, որ հրատարակում է արտաքին գործերի մինիստրութիւնը:

—Կիտչենները Պրետորիայից հաղորդում է, որ գնդապետ Պարկերի զօրախումբը Լէյդենբուրգից գնալով յանկարծակի է բերել Կրուգերսդորպի մօտ գտնուած բոէրների բանակը և վերցրել, որի միջոցին մի բոէր սպանուած է, հինգը վիրաւորուած և 32-ը գերի են բռնուած: Խլուած է շատ տաւար և հացն: Անգլիացիներից սպանուած է մի և վիրաւորուած է 4 հոգի: Գնդապետ Պարկերը Լէյդենբուրգից իւր հետ տարել է Ապդլ Էրգամուսին և նրա ընտանիքը:

—Կ. Պոլսի եբիտասարդ Թուրքերի կոմիտեաը Կահիրէ փախած Դամատ-Մահմուդ-փաշային առաջարկել է ձեռնհասութիւն յանձն առնել գժգոհ եբիտասարդ Թուրքերի, հայերի և մակեդոնացիների ընդհանուր կռնչրես գումարելու համար:

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՊԵՏԵՐԲՈՒՐԴԻ ԲՈՐՍԱՆ

Պետերբուրգ, 2 մարտի

Վերջնէլի կուրսը երեք ամսով

Լոնդոնի վրայ 10 ֆունտ ստեր. համար	99,74
Բերլինի վրայ 100 մարկի համար.	45,85
Պարիզի ,, 100 ֆրանկի ,,	37,30

Վերջնէլի կուրսը էջերով.

Լոնդոնի վրայ.	94,75,
Բերլինի ,,	46,30
Պարիզի ,,	37,57
Բորսային դիսկոնտը.	5—7½%
4% պետական ռենտ.	96½ սակ.
4% ներքին 2, 3, 4 փոխառ. 1891 թ.	—
4½% ներքին 2, 3, 4 փոխառ. 1893 թ.	99⅝ ծախ.
4½ ապն. կալ. բանկի գրաւաթղ.	96 սակ.
5% առաջին ներքին խազարկ. փոխառութ. 1864 թ.	343 սակ.
5% երկրորդ ներքին խազարկ. փոխառութ. 1866 թ.	285 սակ.
5% ապն. կալ. բանկի խազարկ. գրաւաթղթերը.	220 սակ.
3½% պետ. ապն. կալ. բանկի գրաւթ.	89⅛ գն.
5% սակու ռենտը 1884 թ.	—
Թիֆլիսի քաղ. վարկի ընկ.	93½
Օբլիգացիաները	93 ծախ.
Թիֆլիսի կալ. բանկի 5% գրաւ.	93 ծախ.
Քութայիսի ,, ,, 6% ,,	— ծախ.
,, ,, ,, 5% ,,	93 գն.

Բորսայի արձանագրութիւնը խիստ ամբոխ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ

առևտրական բոլոր կեդրոններում 20% կոմիսսիոնով Փետերսբուրգին մացուած տեխնիքական Համանագիտութիւնների գործարանի համար. Ներկայացուցիչներին կարելի է յանձնել նաև գործարանային պահեստ: Առաջարկներն անել ընդ «H. Z. 517» an Haasenstein & Vogler A. G. Hannover (Германія) (M.) № 52666 1—1

ՀՐԱՒԷՐ

Մարտի 11-ին, կիրակի առաւօտեան ժամը 12 ին 2-ուդուրէթի ս. Ասպատածածնի եկեղեցում ժողով է լինելու, նոր երէցփոխան ընտրելու, ուստի սրտանով մեծապատիւ պ. պ. ծխերն առաջին անգամ հրաւիրւում են ներկայ լինել յիշեալ եկեղեցւոյն ընտրութեանը մասնակցելու:

Դործակալ բ. մասին Թիֆլիսի
Գրիգոր աւագ քահանայ Մանդակունի
(565) 3—1

ՏՊԱԳՐՈՒՄ Է

ԲԱԳՐԱՏ ՍԱՀԱԿՅԱՆԻ

ՀԻՒՄԻՍԻ ԱՐԾԻՒԸ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ: Հառաչանքի և տանջանքի աշխարհ: Փախստականներ: Սալան: Սրտի մէջ կայծեր: Ներսէս սրբազանը: Վիշտ: Վշտի արձագանքը: Կենդանի ընծան: Հայ ընտանիք: Գոտւ: Խաչեցէք նրան: Կրակի միջից: Կռիւը: Փախուստ: Խաչ և սուր: Զրնի մէջ: Ինչուէի: Բանակում: Պարսիկների բանակում: Անուրջը: Կեանքից էլ թանկ: Ով տներն էջմիածնում: Էջմիածնի պաշտպանը: Շշտարակի պատերազմը: Ոմբաձիգ Յակոբը: Նահատակները: Արիւնոտ դաշտ: Պատմական անցքերից: Տիկը: Դագանութիւն: Ինդահօքի բերանում: Երեանի առումը: Սրատեսքների պոակը: Հիւսիսի Արծիւը:

Գինն է մինչև լոյս տեսնելը Մէկ ՐՈՒԲԼի Գիմել՝ Тифлисъ, Дворянская улица № 6 Баграту Айвазянцу. (564) 3—1

(M.) № 90634 52—38

ԳՈԼԼԵՆԴԵՐԻ ՄԱԶՈՒԻ ՀԵՂՈՒԿ

ՄԱԶՈՒՆԵՐԸ ԵՒ ԴԱՐՏՆՈՒԿՆԵՐԸ ՈՂՆՇԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Մազոները ոչնչանում են Գոլլենդերի մազոեան հեղուկը գործածելիս առանց որևէ ցաւ պատճառելու: Մի սրուակի գինը 35 կ., 1 ր. վճարով պաստով ուղարկում է 2 սրուակ:

ԴԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏԸ՝ Лабораторія І. ГОЛЛЕНДЕРЪ

С.-Петербургъ, Разъѣзжая ул. № 13.

Հշխոթել ուրիշ հեղուկների հետ, որոնք ոչ մի տեսչութիւն չունին մազերի հետ: (M.) № 9528 4—2

(M) № 2 28

Дозв. цензурою Тифлисъ, Марта 6-го дня 1901 г. Տպարան Ա. Ի. Պետրովի Типографія А. И. Петрова, Голов. пр., № 12 Телефонъ 387